ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374281/ 2 25 22**

<<_____>>_____ 2020թ. **N_____**

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐՏԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ
ՍԻՐՈՒԾ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Վարդանյան

Ի պատասխան Ձեր հարցման (մուտքի ամսաթիվ 15.06.2020թ., գրանցման համար 4277)՝ հայտնում ենք, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ աղբահանությունը և սանիտարական մաքրումը կազմակերպում է համայնքի ղեկավարը, ինչպես նաև իրականացնում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Իսկ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու **տեղեկատվություն տնօրինողին** և ստանալու այդ տեղեկությունը:»:

Ձեր հարցմամբ պահանջվող ամբողջական և թարմ տեղեկատվությունը ստանալու համար առաջարկում ենք դիմել տեղեկատվությունը տնօրինողներին, տվյալ դեպքում՝ համապատասխան համայնքների ղեկավարներին:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, հեռ. (0281) 2 55 95